

ԲԱՐԵԿԱՄ

Եղբայրական յանդիմանութիւնը հաւասար ու համապատիւ բարեկամներու մէջ կը գործադրուի, որովհետեւ ոեւէ իշխանաւոր կամ դատաւոր, եթէ յանցաւորին յանդիմանէ, անիկա իշխանութեամբ կատարուած կշտամբանքի սաստ է, իսկ եթէ փոքրը յանդիմանէ մեծին՝ անիկա յանդգնութիւն է: Սակայն խոհեմութեամբ ու զգուշութեամբ որդին իր հօրը, կրտսերին կարող է խրատել ու յանդիմանութեան գործ կատարել, բայց աս ոչ թէ յանդիմանութիւն կը կոչուի, այլ ազդարարութիւն: Կարծես կը յուշէ անոր այն խօսքերուն կամ գործերուն անպատշաճութիւնը, որոնցմէ կը փափաքի զայն հեռացնել:

Բարեկամութեան սէրէն յառաջացած յանդիմանութիւնը կը պահանջէ ունենալ այս պայմանները: Նախ՝ յանցանքը ստոյգ պիտի ըլլայ, երկրորդ՝ յանդիմանութիւնը յանցանքի համաչափ ըլլայ կամ պէտք եղածէն նուազ երրորդ՝ յանդիմանութիւնը յարմար ժամանակ եւ առանձին պիտի ըլլայ, որովհետեւ բազմութեան առջեւ կատարուած յանդիմանութիւնը ոչ թէ զգաստութեան խրատ է, այլ թշնամանք: Չորրորդ՝ յանդիմանութիւնը ցաւակցաբար պիտի ըլլայ՝ մեղմ ու ազդու խօսքերով: Անոր վրէժխնդրութեան հոգիով ու խիստ խօսքերով կը յանդիմանէ, յանդգնութեան առիթ կուտայ: Հինգերորդ՝ ուղղուելու յոյս պիտի ըլլայ, որովհետեւ անուղղելին յանդիմանելով առաւել վտանգաւոր է...

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Այդ գրոյցը տեղի ունեցած է Պրանտենպուրկի մէջ: Սիրտս սարսափէն կը նուաղի, երբ այդ խօսքերը կը յիշեմ. «Կ'ուզէ Սատանան ըլլայ, կ'ուզէ Աստուած. միայն թէ օգնեն»:

Շատեր այս կարծիքի են: Ինչ գնով կ'ուզէ թող ըլլայ, միայն թէ օգնէ: Այս ձեւով զԱստուած վիրաւորելուն եւ ծանր յանցանքի միջեւ որեւէ տարբերութիւն չկայ:

ԱՏԱՄՆԱՑԱԻ ՀՄԱՅՈՒՄ

Գրեթէ նոյն միջոցներով մարդիկ կը ձերբազատուին աչքի կամ ակուայի ցաւէն:

Անձի մը մասին կը պատմեն, որ ակուաները անտանելի կերպով կը ցաւին: Իրեն խորհուրդ կու տան՝ լուսնի լոյսի տակ հմայել այդ ցաւը: Աղջիկը կը հետեւի խորհուրդին, եւ ցաւերը այլեւս չեն կրկնուիր:

Շփանտառ քաղաքէն երիտասարդ մը կը գրէ. «Փոքր տարիքէս յաճախ աչքերուս վրայ «կարիկներ» (աչքի հիւանդութեան տեսակ) կ'ըլլային: Մեծ մայրս խորհուրդ տուաւ հմայողին դիմել: Հետեւեցայ խորհուրդին, եւ ամէն ինչ անցաւ: Յետոյ ես անձնապէս սորվեցայ բժշկել կարիկը»:

Ուրիշ նամակի մը մէջ կը գրեն. «Տասնհինգ ամսու գաւկիս «Անգլիական հիւանդութիւն» կը սպառնար ինծի խորհուրդ տուին դիմել բուժակի մը ...

Շարունակելի

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ -
Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽԵ ՃԱԻԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 15 ԱՊՐԻԼ, 2012

ԹԻՒ 16

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 1.1-17

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ

գոյութիւն ունէր Բանը: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց անոր ո՛չ մէկ բան ստեղծեց: Կեանքը անով սկիզբ առաւ: Եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի. բայց խաւարը չկրցաւ հասկնալ զայն:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ ղրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ անոր միջոցաւ հաւատայ: Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բանն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով՝ կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր անիկա, աշխարհը իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց իր իսկ ստեղծած մարդիկը զինք չընդունեցին: Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմինի կամ մարդկային կամքով, այլ՝ Աստուծոյ ծնելով:

Եւ Բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը Միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն:

Յովհաննէս անոր մասին վկայեց, յայտարարելով.՝ Ասիկա է ան՝ որուն մասին կ'ըսէի. «Ան որ ինձմէ առաջ գոյութիւն ունէր»:

Անոր լիառատ շնորհքն է, որ մենք բոլորս շնորհքի վրայ շնորհք ստացանք. որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ ԿԱՍ (ԿՐԿՆԱԶԱՏԻԿ)

Ս. Զատիկի յաջորդող Կիրակին կը կոչուի Նոր Կիրակի կամ Կրկնագատիկ: Յիսուս Յարուժեհնէն յետոյ յաճախակի առիթներով երեւցաւ իր աշակերտներուն: Յարուժեհն ու թերորդ օրը, Յիսուս դարձեալ երեւցաւ անոնց: Այնտեղ էր նաեւ թովմաս առաքեալը, որ Յարուժեհն օրը չէր տեսած Տէրը եւ ըսէր էր. «Մինչեւ որ գամբրուն հետքերը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամբրուն տեղերը եւ ձեռքս չդպցունեմ Անոր կողին, չեմ հաւատար» (Յովհ. 20:25): Յիսուս կը հրաւիրէ թովմասը, որ իր ձեռքերը կողին մէջ խրէ եւ շօշափէ: Բայց ան միայն կը բացազանչէ՝ «Տէ՛րս եւ Ա՛ստուածս»:

Յիսուս կ'ըսէ անոր. «Զիս տեսնելուդ համար հաւատացիր, չէ՞ երանի՛ անոնց որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան»: Եկեղեցին, այս յիշատակը կը տօնէ որպէս նաւակատիք Զատիկի: Յոյները Նոր Կիրակին կը կոչեն ԹՈՎՄԱՅԻ ԿԻՐԱԿԻՆ:

Կիրակի կամ Կիւրակէ յունարէն բառ է, որ կը նշանակէ Տէրունի օր: Սկզբնական շրջաններուն տարածած չէր Կիրակի բառը, այլ կը գործածուէր Միաշաբաթ անունը, որպէս շաբթուան առաջին օրը, երբ Քրիստոս յարուցիւն առաւ մեռելներէն:

Հետագային է, որ Միաշաբաթի փոխարէն տարածուեցաւ յունարէն Կիրակի բառը:

Կիրակի օրուան համար Առաքելական ՅՔ կանոններու երկրորդը հետեւեալ հրահանգը կու տայ. «Բոլոր Կիրակի օրերը տօն կ'ըլլայ եւ պատարագ կը կատարուի, կը կարդացուին մարգարէական Գիրքեր եւ առաքելական Նամակներ, եւ ապա կը կարդացուի Ս. Աւետարան»:

Քրիստոնեաներուն համար Կիրակի օրը հանգստեան օր է: Սակայն սիրելի ընթերցող, հանգիստը տունին մէջ ամբողջ օրը հանգիստ ընել չէ, ո՛չ ալ մինչեւ ուշ ժամեր քնանալ. Ֆրիքական հանգիստէն աւելի կարեւորը՝ հոգիի հանգստութիւնն է: Եւ այդ հանգստութիւնը կը զգանք պատարագի մասնակցութեամբ, աղօթքով: Կիրակին չանցնենք քնանալով կամ դատարկ գործերով, այլ՝ աղօթքով:

ՆՈՐ ԿԻՐԱԿԻ

Զատիկուան յաջորդող Կիրակին է: Յայտնի է, որ Քրիստոսի յարուցեամբ միաշաբաթ օրը նուիրագործուեցաւ եւ դարձաւ Կիրակի, ուստի անոր յաջորդող միաշաբաթը կոչուեցաւ Նոր Կիրակի կրկնագատիկ՝ Կրկին Զատիկ: Նոր Կիրակին կը խորհրդանշէ Քրիստոսի եկեղեցւոյ հաստատման եւ ծաւալման սկիզբը:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Եօթը խորհուրդներու մասին ի՞նչ խորհրդածութիւն կարելի է ընել:

Գրիգոր Տաթևացի կ'ընէ երեք շաբթ խորհրդածութիւն, որոնց երկրորդն է հետեւեալը:

Եօթը խորհուրդները կը պատրաստեն մեզ իւրացնելու եօթը առաքինութիւնները.

ա.- Մկրտութիւնը խորհուրդն է հաւատքի. որովհետեւ կը հաւատանք եւ անոր համար կը մկրտուինք:

բ.- Դրոշմը խորհուրդն է յոյսի. որովհետեւ յոյս դնելով Ս. Հոգիի գործութեան վրայ՝ կրող կ'ըլլանք դիմադրելի թշնամիին (Սատանայ)

գ.- Հաղորդութիւնը խորհուրդն է սիրոյ որովհետեւ սիրով է որ կը միանանք մեր գլուխը եղող Քրիստոսին, իբրեւ մարմին անոր մարմինէն եւ իբրեւ անդամ անոր անդամներէն:

դ.- Ապաշխարութիւնը խորհուրդն է արդարութեան. որովհետեւ զղջումի, խոստովանութեան միջոցաւ կ'արդարանանք մեղքերէն:

ե.- Օծումը խորհուրդն է արդարութեան լրումին. որովհետեւ ելլելով կեանքի պատերազմէն (մեռնելով) կը մաքրենք քրտինքն ու փոշին, մարմնաւոր պատերազմէն ելլողներուն պէս:

զ.- Կարգը խորհուրդն է խոհեմութեան եւ գիտութեան. որպէս զի կարգաւոր մարդը խոհեմութեամբ եւ գիտութեամբ կատարէ խորհուրդները եւ խրատէ ժողովուրդը եւ սորվեցնէ:

է.- Պսակը խորհուրդն է ողջախոհութեան. որպէսզի մարդ ողջախոհամուտութեամբ զսպէ բղջախոհ ցանկութիւնը եւ արգիլուի շնութիւն եւ պոռնկութիւն ընելէ:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԽՈՍՏՈՒՄ ՄԸ

Նեղութեան օրը ինձի կանչէ՛, ես քեզ պիտի ազատեմ ու դուն զիս պիտի փառաւորես: (Սաղմ. 50:15):

Ասիկա իսկապէս պատուական խոստում մըն է:

Ահաւասիկ նեղ եւ ստիպողական պարագայ մը, «նեղութեան օրը»: Այսպիսի օրուան մը կէսօրն անգամ մուտք է եւ իւրաքանչիւր անցնող ժամ նախորդէն աւելի մուտք կը թուի: Ու այս խոստումը ճիշդ այսպիսի մուտք ու ամպոտ օրուան մը համար է:

Ահաւասիկ քաջալերիչ խրատ մը. «Ինձի կանչէ՛»: Ասիկա ընելու համար յորդորի պէտք չունիք, ասիկա մեզի բնութիւնը ըլլալու է, Անոր կանչել ամէն օր եւ օրուան որեւէ ժամուն: Ի՞նչ մեծ ողորմութիւն է Աստուծոյ կանչելու արտօնութիւնը ունենալ եւ ի՞նչ մեծ իմաստութիւն է այդ արտօնութիւնը լաւագոյնս գործածելով մեծագոյն չափով անկէ օգտուել: Ի՞նչ յիմարութիւն է «Նեղութեան օրը» մարդոց դիմել: Տէրը կը հրաւիրէ մեզ, որ մեր խնդրանքները իրեն տանինք եւ իր առջեւ պարզենք: Մենք պիտի ընդունինք այս հրաւէրը եւ պիտի չուշանանք այսպէս ընելու:

Ահաւասիկ մեծ խոստում մը՝ «Ես քեզ պիտի ազատեմ»: Ինչ որ ալ ըլլայ քու դժուարութիւնդ, Աստուծոյ համար բնաւ տարբերութիւն չընեն եւ Անոր քով ոչինչ կայ անկարելի. խոստումը միշտ նոյնն է, ապահով եւ ուրախ ազատութիւն, անձամբ իր ձեռքով գործուած: Հաւատա՛նք իրեն ու Ան պիտի պատուէ մեր հաւատքը:

Ահաւասիկ սքանչելի վերջաւորութիւն մը. «Դուն զիս պիտի փառաւորես»: Քու ակնկալածէդ շատ աւելի գոհ պիտի մնաս քու աղաղակիդ պատասխանէն ու զինքը պիտի գովես: Ո՛հ, ասիկա ընենք քանի որ վստահ ենք թէ Ասիկա հաւատարիմ է իր խոստումը կատարելու ամէն զնով:

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ
5.34- 6.7**

Այն ատեն Ատեանին մէջ ոտքի ելաւ Գամաղիէլ անունով մէկը, որ Փարիսեցիներէն էր եւ ամբողջ ժողովուրդին կողմէ յարգուած Օրէնքի ուսուցիչ մը, եւ հրամայեց որ նախ առաքեալները դուրս տանին, եւ ապա ժողովականներուն ըսաւ.

-Ո՛վ Իսրայէլացիներ, լաւ մտածեցէ՛ք եւ ապա որոշում առէ՛ք այս մարդոց մասին: Կը յիշէք թէ ժամանակ մը առաջ Թեւղաս անունով մէկը եկաւ, որ ինքզինք երեւելի մէկը կը յայտարարէր, եւ շուրջ չորս հարիւր հոգիներ իրեն միացան. բայց ինք սպաննուեցաւ եւ բոլոր իրեն միացածները քայքայուեցան ու ցրուեցան: Իրմէ ետք Գալիլիացի Յուդա մը ելաւ մարդահամարի օրերուն եւ բազմաթիւ ժողովուրդ ապստամբութեան մղեց իրեն հետ. սակայն ան ալ կորսուեցաւ, եւ բոլոր անոնք որ իրեն յարած էին՝ ցրուեցան: Գալով ասոնց, կ'ըսեմ ձեզի.- Այդ մարդոցմէ ձեռք քաշեցէ՛ք եւ ձգեցէ՛ք զիրենք: Որովհետեւ, եթէ անոնց խորհուրդն ու գործը մարդոցմէ է՝ պիտի խափանուի. իսկ եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար խափանիլ, եւ թերեւս այդ ձեռով Աստուծոյ ղէմ պայքարած կ'ըլլաք:

Ժողովականները հաւանեցան Գամաղիէլի խօսքերուն, եւ առաքեալները կանչել տալով՝ ձեծել տուին. ապա պատուիրելով անոնց՝ որ ա՛լ Յիսուսի անունով չխօսին, արձակեցին զանոնք: Իսկ առաքեալները Ատեանէն հեռացան, ուրախանալով որ Տիրոջ անունին համար անարգանքի արժանացան: Ամէն օր, թէ՛ տաճարին եւ թէ՛ իրենց տուններուն մէջ, անդադար կը սորվեցրնէին՝ Յիսուս Քրիստոսը քարոզելով:

**ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ
3.1-12**

Եղբայրներս, ամէնքդ ալ ուրիշները սրբագրելու հետամուտ մի՛ ըլլաք, գիտնալով որ մենք՝ ուսուցանողներս աւելի խստութեամբ պիտի դատուինք, որովհետեւ բոլորս ալ յանցանքներ ունինք:

Ան որ գիտէ իր խօսքերը կշռել՝ կատարեալ մարդ է, ինքզինքին իշխելու կարող: Տես, թէ ինչպէս ձիերուն բերանը սանձ կը դնենք՝ որպէսզի մեզի ենթարկուին, եւ անով ձիուն բոլոր շարժումները կը կառավարենք: Կամ դիտէ՛ նաւերը. ո՞րքան ալ մեծ ըլլան եւ ինչպիսի՛ զօրաւոր հովերէ ալ քշուին, փոքրիկ դեկ մը գիրենք կ'ուղղէ դէպի հոն՝ ուր նաւավարը կը փափաքի տանիլ: Նոյնպէս ալ լեզուն. թէեւ փոքր անդամ մըն է, բայց մեծամեծ բաներով կը պարծենայ: Գիտէք, թէ պզտիկ կայծր հսկայ անտառ մը կրնայ հրդեհել: Լեզուն ալ կրակ է: Անհրաւութեան աշխարհ մըն է անիկա: Թէեւ պարզ մէկ անդամն է մարմինին, բայց ամբողջ մարդը կ'ապականէ, եւ գեհէնի կրակով բռնկած՝ ամբողջ կեանքը կրակով կը վառէ:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆՉԷՆ: ՄԻՇՏ
ԱՍՏՈՒԱԾԱՀՈՒՆՉ ԿԱՐԴԱՆՔ**